Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

751ª
225
554Կ

ԳՐԱԳԵ՛Տ, ՍՈՎՈՐԵՑՐՈՒ ԱՆԳՐԱԳԵՏԻՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Հ. Ս. Խ. Հ. «ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

## (ԿԱՆԸ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԸ-Ի (№ 8)

ՅԵՐԵՎԱՆ 1930

ԳՐԱԳԵ՛Տ, ՍՈՎՈՐԵՑՐՈՒ ԱՆԳՐԱԳԵՏԻՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Հ. Մ. Խ. Հ. «ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

## (ԿԱՆԸ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԸ-Ի (№ 8)

ՅԵՐԵՎԱՆ 1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 2015
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 5062 (r)
ՏԻՐԱԺ 5000

Հաստատված է և ցուցակագրված Ներք. Գործ. Ժողկոմատում № 50-ի տակ։

10 փետրվարի 1930 թ.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Անգրագիտության և յերկրի կուլտուրական հետամնացության դեմ պայքարելը աշխատավորության լայն խավերի և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության գիտակից քաղաքացիների գործն է։

Կուլտուրական հետամնացության և առանձնապես անգրագիտության ու կիսագրագիտության վերացման գործին օգնելու նպատակով՝ կազմակերպվում է «Կորչի Անգրագիտությունը» Ընկերությունը (ԿԱՆԸ)։

2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում պետք է աջակցի պետական օրգաններին անգրագիտության վերացման աշխատանքներում։

3. Ընկերությունը մղում է լայն ագիտացիա հօգուտ անգրագիտության վերացման՝

ա) վորի համար մոբիլիզացիայի յե յենթարկում լայն հասարակայնությունը.

բ) օգնում է անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողովներին և անգրագիտության վերացման գործով զբաղվող բոլոր կազմակերպություններին՝ դպրոցներ կազմակերպելու, կահավորելու, դասական, գրենական պիտույքներ ձեռք բերելու, մեթոդական, գեղարվեստական քաղաքական-մասսայական գրականություն հրատարակելու խնդիրներում.

գ) ընկերությունը կազմակերպում է անգրագիտության վերացման դպրոցներ.

դ) ընկերությունը քաղլուսհիմնարկների հետ կազմակերպում է ինքնազարգացման գործը՝ պայքարելու համար անգրագիտության ռեցեդիվի դեմ.

ե) աջակցում է քաղլուս. և սոցդաս. հիմնարկներ (խրճիթ-ընթերցարան, կարմիր անկյուն, ակումբ, մանկահրապարակ, մսուր և այլն) կազմակերպելու գործին:

4. Ընկերությունը գործում է ՀՍԽՀ սահմաններում:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՋԻՋՆԵՐ

1. Ընկերության հիմնական կազմակերպությունը համարվում է բջիջը: Բջիջը կազմակերպվում է այն ժամանակ, երբ անդամների թիվը 3-ից պակաս չէ:

2. Ընկերության բջիջը կարող է կազմակերպվել խրճիթ-ընթերցարաններին, ա-

կումբներին, դպրոցներին, գյուղխորհուրդներին, կոմունաներին, կոլեկտիվներին, կուսակցական և կոմյերիտ բջիջներին, կոոպերատիվներին, զինվորական զորամասերին կից և այլն:

3. Բջիջը կարող է կազմակերպվել կուսակցության, կոմյերիտմիության, արհեստակցական, հասարակական և խորհրդային մարմինների, ինչպես նաև ընկերության բջիջի ու նրա առանձին անդամի նախաձեռնությամբ:

4. Ընկերության բջիջները պարտավորվում են իրենց առօրյա աշխատանքները համաձայնեցնել ընկերության համապատասխան ճյուղերի, քաղլուսօրգանների, Անգրագիտության Վերացման Արտակարգ Հանձնաժողովների գործունեությանը:

5. Ընկերության բջիջի մեջ ընդունվում են այն անհատները, վորոնք ցանկություն են հայտնում աշխատելու բջիջում և վորոնք ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն:

Ընկերության բջիջի անդամ կարող են լինել 15 տարին լրացրած քաղաքացիները. դատարանով չդատապարտվածները, ինչպես նաև պետական, տնտեսական, արհեստակցական, կոոպերատիվ և խառը տիպի կազմակերպությունների իրավական դեմքերը: Դրանք մասնակցում են ընկերության աշխատանքներին իբրև իրենց հիմնարկների ներկայացուցիչներ:

Ծանոթություն.— *Աշակերտները կարող են լինել բջիջի անդամ 13 տարեկանից:*

6. *Բջիջը կարող է ցրված համարվել՝*

*ա) երբ վորոշումը կայանում է անդամների ընդհանուր քանակի կեսից ոչ պակասի կողմից.*

*բ) ընկերության համապատասխան կազմակերպության վորոշմամբ.*

*գ) բջիջի ցրման դեպքում նրա ամբողջ ունեցվածքը մնում է ընկերության համապատասխան կազմակերպության:*

7. *Բջիջը գործում է ընկերության կանոնադրության սահմաններում:*

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՋԻՋԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ

1. *Ընկերության բջիջի վարչական օրգանները հետևյալներն են՝*

*ա) ընդհանուր ժողով.*

*բ) բջիջի նախագահությունը:*

2. *Բջիջի ժողովը հրավիրվում է ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ. ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև բջիջի վերստուգիչ հանձնաժողովի պահանջմամբ: Ընդհանուր ժողովին նախագահում է բջիջի անդամներից մեկը ընտրված ձայների մեծամասնությամբ: Վորոշումները և բանաձևերն ընդունվում են անդամների ձայների մեծամասնությամբ:*

3. Ընդհանուր ժողովն ընտրում է՝
ա) բջջի նախագահություն. բ) վերստուգիչ հանձնաժողով. գ) սեկցիաներ — կազմակերպչական, ագիտացիոն, ֆինանսական և գյուղացիական: Հաստատում է բջջի աշխատանքների նախագիծը, լսում է բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումները:

Ծանոթություն.— *Սեկցիաներն ընտրվում են միայն քաղաքներում:*

4. Ընդհանուր ժողովն օրինական է համարվում, երբ ներկա են անդամների կեսը կամ ավելին: Հակառակ դեպքում նշանակված ժամից կես ժամ հետո՝ ընդհանուր ժողովը համարվում է երկրորդ անգամ հրավիրված և օրինական է լինում անկախ ներկա եղող անդամների թվից:

5. Յուրաքանչյուր բջիջ, վոր ունի 10-ից պակաս անդամ, ընտրում է մեկ քարտուղար, իսկ 10 կամ ավելի՝ նախագահություն:

6. Բջջի նախագահությունն իր միջից ընտրում է քարտուղար, նախագահ և գանձապահ:

7. Բջջի նախագահությունը պարտավորվում է բջջի գործունեության մասին համապատասխան շրջանային կամ գավառային ԿԱՆԸ խորհրդին ներկայացնել մանրամասն զեկուցում 3 ամսվա գործունեության մասին, իսկ յուրաքանչյուր ամիս ինֆորմացիոն ձևով:

# ԲՋԻՋԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Բջիջի բոլոր անդամները պետք է ակտիվորեն աշխատեն՝*

*ա) լիկկայաններում կամ անգրագիտության վերացման աջակցող մի վորևե կազմակերպության մեջ: Կարող ուժերը պետք է պարապեն դպրոցներում, ձեռնարկներում անհատական – խմբակային պարապմունքներին: բ) Ստանձին հերթապահներ ունենան որոնք վորոշ ժամերին փոստ–հեռագրատանը, դատարաններում, գյուղխորհրդներում, հիվանդանոցներում, խրճիթ–ընթերցարանի տեղեկատու բյուրոյում և այլ հասարակական վայրերում ոգնություն տալու նպատակով՝ գրելով հասցեներ, նամակներ, դիմումներ և այլն:*

2. *Ընկերության մեջ մտնելու ժամանակ անդամները մուծում են մուտքի վճար: Հետագայում շարունակաբար վճարում են անդամավճար, վորը նշանակվում է անդամագրքույկի մեջ: Մուծումները սահմանվում են հետևյալ չափով՝*

*ա) մուտքի վճար* 10 *կոպ.*

*բ) անդամավճար ամսական բանվորներից և ծառայողներից, վորոնք ստանում են ամսական մինչև* 100 *ռ. աշխատավարձ,* 10 *կոպ. (տարեկան* 1 *ռ.* 20 *կ.),* 100 *ռ. բարձր*

ստացողներից,—ամսական 20 կ. (տարեկան 2 ռ. 40 կ.):

Ուսանողներից (14 տարեկան հասակից սկսած) ամսական 5 կ. (տարեկան 60 կ.), գյուղացիներից ու չքավորներից ամսական 5 կ., միջակներից—10 կ.:

Գործազուրկները, կարմիր բանակայինները և ծայրահեղ չքավոր գյուղացիներն ազատվում են անդամավճար մուծելուց:

Անդամավճարների գանձումները պետք է կատարել մեկ կամ յերկու անգամ:

գ) Մուտքի վճարը պարտադիր է բոլորի համար: Մուծումների ժամկետները սահմանվում են ընկերության տեղական կազմակերպությունների կողմից.

դ) մուտքի վճար մուծելուց հետո ընկերության անդամներն ստանում են անդամակցական տոմս:

4. Ընկերության անդամները հեռացված են համարվում՝ ա) ինքնակամ հեռանալու դեպքում. բ) ընկերության տեղական բաժանմունքների սահմանած ժամանակամիջոցում անդամավճար չմուծելու դեպքում. գ) ընկերության բջիջի—անդամների ընդհանուր ժողովի 2/3-ի վորոշմամբ, յերբ հեռացվողը դեպի ընկերությունը ցույց է տվել չարակամ վերաբերմունք, կամ քրեական հանցանք է կատարել:

Ծանոթություն 4-րդ կետին.—Ընկերու-

թյունից հեռացնելու վորոշման դեմ կարելի յե բողոքել ընկերության ավելի բարձր մարմնին:

5. Այն անհատները, վորոնք վեց ամսվա ընթացքում անդամավճար չեն տալիս, համարվում են ընկերությունից մեքենայորեն դուրս մնացած:

6. Սույն կանոնադրությամբ նախատեսված աշխատանքին բջիջը, ինչպես նաև նրա յուրաքանչյուր անդամը, մասնակցում է հետևյալ ձևերով՝ օրինակ.

1. Անգրագիտության ռեցեդիվի դեմ պայքարելու նպատակով բջիջը լիկկայան ավարտողին տեղավորում է կիսագրագետների դպրոցում կամ կիսագրագետների խմբակներում, կցում է խրճիթ-ընթերցարանների աշխատանքներին, մասնակցել է տալիս պատի լրագրին, բերել է տալիս գրագիտական կամ տարրական հանրակրթական դպրոցների համար սովորողների պահանջներին և կարիքներին համապատասխանող լրագիր կամ ամսագիր:

2. Ստեղծում է համապատասխան նպաստավոր պայմաններ գոյություն ունեցող ա/վ դպրոցներում կանոնավոր պարապմունքներ ունենալու համար:

3. Աջակցում է հասակավորների և անչափահասների անգրագիտության վերացման գործին, յերբ այդ նպատակի համար հասա-
ության կողմից նախաձեռնություն է
բերվում:

4. Աջակցում է դպրոցների կառուցման գործին, երբ կա գյուղացիների կողմից նախաձեռնություն:

5. Լայն աշխատանք է տանում Անգրագիտության Վերացման և «Կորչի Անգրագիտությունը» Ընկերության խնդիրները պարզաբանելու համար իր հիմնարկի, ձեռնարկի բանվորների մեջ և իր գյուղում:

6. Աշխատանք է տանում «Կորչի Անգրագիտությունը» Ընկերության մեջ նոր անդամներ գրավելու համար, առանձնապես քաղաքի բանվորներից, գյուղի բատրակներից, կոլխոզնիկներից, չքավոր ու միջակ գյուղացիներից:

7. Խիստ հսկողություն է սահմանում դպրոցների, անհատական-խմբակային պարապմունքների հաճախումներին և միջոցներ է ձեռք առնում անկանոն հաճախումներին վերջ տալու համար:

8. Հոգ է տանում անգրագիտության վերացողի և ուսուցչի աշխատանքի պայմանները լավացնելու, դպրոցներին նորմալ ձևով ու ժամանակին գրենական և դասական պիտույքներ, վառելիք, լուսավորություն և այլն մատակարարելու համար:

9. Աշխատանքի բաշխում է կատարում անդամների մեջ, տալով յուրաքանչյուր անդամին վորոշ հանձնարարություն անգրագիտության վերացման ասպարեզում կատարելու:

10. Կապ է հաստատում տեղական բոլոր կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ ՀԿ(բ)Կ, ՀԼ Կոմյերիտ բջիջների, գործկոմների, տեղկոմների, գործարանային վարչությունների, քաղլուսկազմակերպությունների, կոլխոզների, խորհտնտեսությունների, դպրոցների և հասարակական այլ կազմակերպությունների հետ։

11. Պատի լրագրերում և սեփական մամուլում լուսաբանում է բջջի աշխատանքները, ինչպես նաև օգտագործում է տեղի ունեցող բոլոր ժողովները «Կորչի Անգրագիտությունը» Ընկերությունը ժողովրդականացնելու նպատակով։

12. Աջակցում է գյուղի քաղլուսհիմնարկի աշխատանքներին և միջոցներ է ձեռք առնում կազմակերպելու խրճիթ-ընթերցարան, ռադիո, կամ կարմիր անկյուն այնտեղ, ուր չկան այդպիսինները։

13. Ագիտացիա յէ տանում գրքի համար և աշխատում է գիրքը մոտեցնել մասսային։

14. Աջակցում է նախադպրոցական աշխատանքներին և միջոցներ է ձեռք առնում՝ մանկապարտեզներ, մանկական հրապարակներ, մսուրներ կազմակերպելու համար։

15. Իրենց կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար ազգաբնակության կողմից նկատված բոլոր ձևերին աջակցություն է հանում։

## ԲՋԻՋԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. *Բջիջի ֆոնդը կազմվում է՝ ինքնակամ նվիրատվություններից, անդամավճարներից, յերեկույթներից, ներկայացումներից, շաբաթօրյակներից, հանգանակությունից, գրականության և կրծքանշանների վաճառումից, չեֆկոմխոխայի կողմից անգրագիտության վերացման համար հատկացված գումարից, ՓՌԿ-ից և այլն:*

Ծանոթություն.—*Նվիրատվությունների և գանձումների ժամանակ թե նվիրաբերողը և թե ստացողը փոխադարձ կերպով ստանում են պատշաճ ստացականներ: Նվերներ հավաքողները պարտավորվում են հավաքված գումարի հետ միասին համապատասխան մարմնին (բջիջի գանձարկղին) ներկայացնել նաև ստացականների արմատները, կամ ստացված գումարը հաստատող ուրիշ փաստաթուղթ:*

2. *Բջիջի միջոցները ծախսվում են՝ իր կողմից բացված ու վ դպրոցի կահավորման, գրենական ու դասական պիտույքների, ուսուցչի վարձատրության ու լրագրի բաժանորդագրության, վառելիքի ու լուսավորության վրա:*

3. *Անդամավճարների* 5 *տոկոսը և մյուս գանձումների* 15 *տոկոսը բջիջը պարտավորվում է մուծել ընկերության գավվարչության գանձարկղը:*

Ծանոթություն.—*Քաղաքային բջիջները*

դավթարչության գանձարկղն են մուծում, յեթե նրանց հաշվին դպրոց կամ խմբակ չկա, ամբողջ մուտքի 75 տոկոսը:

## ԲՋԻՋԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1. Բջիջի վերստուգիչ հանձնաժողովը վեց ամիսը մեկ անգամ ստուգում է գանձարկղն ու բջիջի դրամային հաշվետվությունը, գործունեությունը և արդյունքների մասին զեկուցում է բջիջի ընդհանուր ժողովին և բարձրագույն մարմնին (գրավոր):

Ծանոթություն.—Վերստուգիչ հանձնաժողովը կարող է ստուգում կատարել անկախ այդ ժամկետից, յերբ կարիք կզգացվի:

1. «Կորչի Անգրագիտությունը» Ընկերության կազմակերպչական սխեման բջիջային է:

2. Շրջաններում 10 բջիջ կազմակերպվելու դեպքում ընտրվում է ընկերության շրջանային խորհուրդ, հակառակ դեպքում շրջանում ընտրվում է մեկ լիազոր:

Ծանոթություն.—Ուչկապրոֆսոժն ունենում է իր գծերում բջիջներ, վորոնք ընտրում են խորհուրդ, վորն յենթարկվում է միայն Կենտրոնական Խորհրդին:

3. Ընկերության շրջանային խորհուրդները ներկայացուցչական ձևով հրավիրում են գավհամագումար, վորտեղ ընտրում են ընկերության գավխորհուրդ:

4. Հանրապետական համագումարում ընտրվում է Կենտրոնական Խորհուրդ՝ բաղկացած 35–37 հոգուց:

5. Խորհուրդն ունենում է նախագահություն:

6. Ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով:

7. Կազմակերպված բջիջները յենթարկվում են ընկերության համապատասխան շրջանային կամ գավառային խորհուրդներին, իսկ վերջինները Կենտրոնական Խորհրդին:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԱՎԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Կորչի Անգրագիտությունը» Ընկերությունը բոլոր գավկենտրոններում ունենում է իր խորհուրդները, վորոնք միացնում են տվյալ գավառի ամբողջ աշխատանքները:

2. Ընկերության գավխորհուրդները 7-ից մինչև 21 հոգի անդամ, թեկնածու կազմով ընտրվում են ընդհանուր գավառային կոնֆերանսում. ունենում են նախագահություն, ընտրում են նախագահ, քարտուղար և այլն. որանք ղեկավարում են գավառային աշխատանքներն ընկերության գծով:

3. Գավառային կոնֆերանսը հավաքվում է տարեկան մեկ անգամ և օրինական է համարվում, յերբ ներկա յեն լինում հրավիրված անդամների կեսից ավելին:

4. Ընդհանուր կոնֆերանսը քննում է անցյալ գործունեությունը և մշակում առաջիկա գործունեության նախագիծը:

5. Գավառային խորհուրդներն ունենում են գավվերստուգիչ հանձնաժողովներ (տես վերստուգիչ հանձնաժողովների մասին):

6. Գավխորհուրդների միջոցներն են կազմում ա) բջիջներից ստացվող տոկոսները.

բ) իր կողմից կազմակերպված ձեռնարկություններից, հանդեսներից ստացած գումարները.

գ) գավմարմինների տոկոսային հատկացումները և պարբերական նվերները, կրծքանշանների ու գրականության վաճառքի արդյունքները:

7. Գավխորհուրդներն իրենց դրամարկղի մուտքի գումարներից 15 տոկոսն ուղարկում են ընկերության Կենտրոնական Վարչությանը:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

1. Ընկերության բարձրագույն օրգանը հանդիսանում է Համահայաստանյան Համագումարը:

2. Համագումարները լինում են՝ ա) հերթական, որոնք հրավիրվում են Կենտրոնական Խորհրդի կողմից տարին մեկ անգամ. բ) արտակարգ, որոնք հրավիրվում են Կենտրոնական Խորհրդի կամ վերստուգիչ հանձնաժողովի և կամ ընկերության ճյուղերի մեկ հինգերորդի պահանջմամբ:

3. Համահայաստանյան համագումարն օրինական է համարվում, յերբ մասնակցում են ընկերության անդամների ներկայացուցիչների կեսից ավելին:

4. Ընկերության Կենտրոնական Խորհուրդը ընտրվում է համագումարի կողմից (13—57 անդամից, 5—9 թեկնածուից) և մեկ համագումարից մինչև մյուս համագումարը տևող ժամանակաշրջանում հանդիսանում է ընկերության բարձր գործադիր մարմինը:

5. Կենտրոնական Խորհուրդն ընտրում է նախագահություն, բաղկացած 7—13 անդամից և 2—5 թեկնածույից: Նախագահությունն իր միջից ընտրում է՝ նախագահ, փոխնախագահ, քարտուղար և ունենում է իր տեխնիկական ապարատը, գործավարությունը:

6. Կենտրոնում և տեղերում Անգրագիտության Վերացման Արտակարգ Հանձնաժողովի ներկայացուցիչը, խորհրդի և նախագահության ժողովներին մասնակցում է վճռական ձայնով:

7. Կենտրոնական և գավառային խորհուրդներն իրավասու յեն սույն կանոնադրության սահմաններում հրատարակել համապատասխան հրահանգներ, կնքել պայմանագրեր, բացել փոխատվություններ և հարաբերության մեջ մտնել պետական և հասարակական մարմինների հետ: Ընկերության $^2/_3$-ից ավելի անդամների հրաժարման դեպքում ընկերությունը համարվում է լուծված, իսկ գույքը

մնում է Անգրագիտության Վերացման Կենտրոնական Արտակարգ Հանձնաժողովին։

## ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

1. Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովը՝ 3 հոգուց բաղկացած մեկ թեկնածուով ընտրվում է Համահայաստանյան Համագումարի կողմից մեկ տարով, լինելով պատասխանատու Համահայաստանյան Համագումարի առաջ, որին և ներկայացնում է զեկուցում ընկերության գործունեության մասին։

2. Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովի պարտականությունն է՝

ա) Հետևել Կենտրոնական Խորհրդի հաշվետվության կանոնավոր տանելուն և ստացվածքին։

բ) Հետևել, որպեսզի ընկերության Կենտրոնական Խորհուրդը կանոնադրությունից շեղումներ չանի։

3. Գավառային խորհուրդներին կից գավառային վերստուգիչ հանձնաժողովներն ունեն նույն պարտականությունները, ինչ որ Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովը։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0046791

[104]

A 9902

# ԿԱՆԸ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սոցիալիզմի շինարարությունը և անգրագիտության վերացումը. էջ 47 . . . . . . . . . . . . . գինը 5 կ.
2. Անհատական – խմբակային պարապմունքների մասին. էջ 36 . . . . . . . . . . . . . . . . գինը 5 կ.
3. Ձեռնարկ ԿԱՆԸ-ի բջիջների համար. էջ 51 . . . գինը 10 կ.
4. «Կուլտարշավ»—գրագիտության դպրոց. էջ 16 . գինը 2 կ.
5. «Կուլտարշավ»—բոլորս «Կորչի Անգրագիտությունը» ընկերության շարքերը. էջ 8 . . . . . . . . . գինը 2 կ.
6. «Կուլտարշավ»—անընկճելի. էջ 16 . . . . . . գինը 1 կ.
7. Կորնել պապի գաղտնիքը—Ա. Դոդե, պատկերազարդ, գեղարվեստական. էջ 16 . . . . . . . . . . . գինը 5 կ.